Մրցույթի հայտարարություն

‘Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց’ ՊՈԱԿ

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)>> կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցի կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,

4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցում 2021 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 14 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 15^{30} -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 13^{00}-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցում : Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ գ.Ագարակ 4 փողոց,շենք 2:

Տեղեկությունների համար դիմել՝ Գայանե Անտոնյանին, հեռ.՝ 093 68 32 48, էլ.հասցե՝antonyangayane0@gmail.com